ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 6-ԻՑ 10-Ը ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ ՀԱՄԱԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ (Ք. ԺՆԵՎ) ԿԱՏԱՐԱԾ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ, ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

   Հովհաննես Հարությունյան, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

2. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ և ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

   Շվեյցարիայի Համադաշնություն, ք. Ժնև նոյեմբերի 6-ից 10-ը

3. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   Հանքարդյունաբերության, օգտակար հանածոների, մետաղների և կայուն զարգացման միջկառավարական համաժողովի ղեկավար Գ. Ռադֆորդ

4. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ)**

   Մասնակցություն Հանքարդյունաբերության, օգտակար հանածոների, մետաղների և կայուն զարգացման միջկառավարական 19-րդ համաժողովին (IGF)

5. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

   - Հանքանյութերի գնագոյացման քաղաքականությունը, ազգային առաջնահերթությունները, տարածաշրջանային նախաձեռնությունները և պարտավորությունները,
   - արհեստագործական և փոքրածավալ հանքարդյունաբերության դերը էներգետիկ անցումների համար անհրաժեշտ հումք մատակարարելու նպատակով,
   - սոցիալական խնդիրները, այդ թվում՝ գենդերային հավասարությունը և մարդու իրավունքների պաշտպանության ուժեղացման ուղիները,
   - հանքավայրերի թափոնների վերամշակումն ու վերաօգտագործումն արագացնելու ռազմավարությունները

6. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Համաժողովի նիստի ընթացքում ներկայացվել են մի շարք նախաձեռնություններ և հետազոտություններ միջազգային կազմակերպությունների մասնավորապես՝ Միավորված ազգերի կազմակերպության կողմից: Քննարկվել է նաև Հանքարդյունաբերության, օգտակար հանածոների, մետաղների և կայուն զարգացման միջկառավարական համաժողովի կողմից իրականացված հետազոտությունների արդյունքները:

7. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Համաժողովի ընթացքում փաստաթղթեր չեն ստորագրվել և որոշումներ չեն ընդունվել: Քննարկվել է հանքարդյունաբերության ոլորտում հաջողված փորձը ՀՀ-ում տեղայնացնելու հնարավորությունը:

8. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Համաժողովի ընթացքում առաջարկվել է նաև քվեարկել IGF-ի ռազմավարության շուրջ փոփոխություններ կատարելու վերաբերյալ: Ներկայացվել է նաև Future Minerals Forum-ի (FMF) նպատակները, առաջիկա նախաձեռնությունները և կառավարության ներգրավման հնարավորությունները:

9. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ

14 նոյեմբերի 2023թ.